տնտեսական այլ դրդապատճառների հետևանքով քրդական բնակավայրերի աշխարհագրությունը բավականաչափ փոխվեց։ Եթե արաբական արշավանքների արշալույսին (VII դ. 30-ական թվականներ) արաբ հեղինակները քրդերին հիշատակում են գլխավորապես իրանական նահանգներում՝ Ջիբալում, Ֆարսում, Խուզիստանում, Ատրպատականում և Մոսուլի մարզում, ապա X դ. սկսած՝ նաև բազմաթիվ այլ շրջաններում։ Որքան մեզ հայտնի է, ալ-Մասուդին (X դ.) միակ հեղինակն է, որն իր երկերում ներկայացրել է քրդական ցեղերի անուններն ու բնակության վայրերը։ Ուշ շրջանի հեղինակների հաղորդումներից պարզվում է, որ նրա ցուցակները մեզ հասել են կրճատ խմբագրությամբ և որ իբր նա տվել է երեք հարյուր ցեղանուն[7]։ Նույնիսկ, եթե ալ-Մասուդիի հիշած բոլոր ցեղանունները մեզ չեն հասել, նրա երկերում եղած նյութերը որոշակի պատկերացում են տալիս X դ. քրդերի տեղաբաշխման վերաբերյալ։ Ալ-Մասուդիի վկայակոչումների համաձայն քրդերը տարածված էին հետևյալ շրջաններում՝ Քերման, Սաջիստան (Սիստան), Խորասան, Իսֆահան, Ջիբալ, Նեհավանդ, Դինավար, Համադան, Շահրիզուր, Դարաբադ, Սամաղան, Բաբ ալ-Աբուաբ (Դարբանդ), Ջազիրա, Ասորիք (Շամ), Սուզուր և այլն[8]։ Այդ տարածքներում նա հիշատակում է հետևյալ քրդական ցեղերին. «ալ-Բադինջան, աշ-Շուհջան, ալ-Շադինջան (կամ աշ-Շադանաջան), ան-Նաշավիրա, ալ-Բուզիքան, ալ-Լուրիյա, ալ-Ջուրկան, ալ-Ջավանիյա, ալ-Բարիսյան (կամ մալ-Բարսյան, ալ-Բարիսան), ալ-Ջալալիյա, ալ-Մուսթաքան, ալ-Ջաբարիկա (ալ-Ջաբարկիյա), ալ-Ջուրդան, ալ-Քիքան (ալ-Կիկան), ալ-Մաջուրդան, ալ-Հադբանիյա և ուրիշներ»[9]։ Ալ-Մասուդիի հաղորդումների համաձայն, աշ-Շուհջան ցեղը բնակվում էր Դինավարի, Նեհավանդի և Համադանի շրջաններում, իսկ ալ-Մաջուրդանը՝ Կանգավարում (Քանքավար), որը Ջիբալի նահանգի գավառներից էր՝ Համադանի և Քերմանշահի միջև ընկած շրջանում։ Աշ-Շուրահ[10], աշ-Շադինջան (կամ աշ-Շադանջան), ալ-Լուրիյա, ալ-Մադանջան, ալ- Մազդանաքան, ալ-Բարիսան, ալ-Ջալալիյա, ալ-Ջաբարկիյա, ալ-Ջավանիյա, ալ-Մուսթաքան ցեղերը բնակվում էին Ջիբալում։ Ըստ ալ-Մասուդիի, ադ-Դաբաբիլա ցեղը հաստատվել էր Ասորիքում, իսկ ալ-Յակուբիյա և ալ-Ջուրկան ցեղերը՝ Մոսուլի շրջանում[11]։ Յավոք, մեզ հասած վկայությունները հստակ չեն ընդգծում այդ տարածքներում քրդական ցեղերի բնակության սահմանները։ Հայտնի է, որ արաբական արշավանքների արշալույսին սկզբնաղբյուրները քրդերին հիշատակում են Ադիաբենեում և հարակից տարածքներում, որտեղ մատնանշվում է քրդական ամրությունների առկայությունը[12]։ Այստեղ բնակվող քրդական ցեղերը, որոնց անունները մեզ հայտնի են ավելի ուշ շրջանից, տարածված էին հիմնականում Տիգրիսի արևելյան և արևմտյան ափերին՝ Մեծ և Փոքր Զաբերի հովիտներում։

---

[7] Ed-Dimichqui, Nukhbat ad-Dahr fi A'dschâib al-Barr wal-Bahr, pub. par A. Mehren, Leipzig, 1923, p. 255.

[8] Al-Masūdi, Kitab at-Tanbih wal-/schraf,—Bibliotheca Geographorum Arabicorum- (այսուհետև՝ BGA), ed. M. J. De Goese, Lugduni Batavorum Apud E. T. Brill, 1894, p. 89.

[9] Նույն տեղում, էջ 88—89։

[10] Աշ-Շուրահը ցեղանուն չէ. այն մահմեդական խարիջի աղանդի անվան հոմանիշն է։

[11] المسعودى ، مروج الذهب ومعادن الجوهر ، ج . ٢ ، بيروت ، ص ٢٥١ .

[12] البلاذرى ، كتاب فتوح البلدان ، القاهرة ، ١٩٠١ ، ص ٣٣٩ ...